միայն անուններն են փոխված»[27], վերաբերում է ոչ այնքան Դավրիժեցու դիտավորությանն ու գրական-ստեղծագործական անկարողությանը, որքան հենց այն կարծրակաղապարներին, որոնք տվյալ ժամանակաշրջանում արդեն նկատելի էին վկայաբանական ժանրերի համակարգում և դրսևորվում էին ոչ միայն կառուցվածքային, այլև բովանդակային հարթություններում:

Կաղապարային է ամենից առաջ վկայաբանությունների վերնագրային պոետիկան՝ ***վասն այսինչ անվամբ քրիստոնյայի նահատակության***: Այսպիսի դեպքերում պատմագրության գլուխների վերնագրերը նաև ժանրային բնորոշումներ են կամ ժանրային պատկանելության ցուցիչներ:

Կաղապարային են նաև ներտեքստային մի շարք միավորներ: Այդ առումով ամենաակնառուն հակիրճ վարքի ու դիմանկարի պարտադիր առկայությունն է վկայաբանության սկսվածքում: Ճիշտ է, դիմանկարն այս պարագային դրսևորվում է իր մասնավոր, այսպես ասած՝ հոգևոր նկարագրի կերտմամբ, բուն դիմանկարային մանրամասնությունները սակավադեպ են, իսկ եղած դեպքերում էլ՝ պարզապես լրացնում են հոգևոր նկարագիրը: Սկսվածքի այդ կաղապարային նրբագծերը հստակ պատկերացնելու համար բերենք երկու տարբեր վկայաբանությունների՝ հերոսներին ներկայացնող մասը.

ա) «Այս երանելի նահատակս Նիկօղայոս էր ի քաղաքէն Տիգրանակերտու, որ այժմ ասի Ամիթ, ծնեալ և սնեալ ի նոյն քաղաքին, և էր մանուկ տիօք իբրև տասն և հնգից ամաց, տեսլեամբն գեղեցիկ՝ և հասակաւն վայելուչ, զաւակ քրիստոնէից, և ազգաւ ի Հայոց» (էջ 400–401).

բ) «Այս երանելի նահատակս Խաչատուր էր ի քաղաքէն Տիգրանակերտու՝ որ այժմ ասի Ամիթ, ծնեալ և սնեալ ի նմին

---

[27] ***Լևոն Բաբայան,*** Դրվագներ Հայաստանի XIV–XVIII դարերի պատմագրության, Երևան, 1984, էջ 126: